

Ընկերականությունն հոս այնչափ յառաջ գացած է, որ երկու դրացի զիրար չեն ճանչնար եւ միջագիւղցիին կհարցնեն, թէ ո՛վ է իրենց քովի տունը նստող ընտանիքն:

Պէշիկթաշցին այն աստիճան քաջասիրտ է, որ չորս պէշիկթաշցի կարող է մէկ մուկի դէմ կռուելու: Ամեն անգամ որ *Հա պէշ Էլէնի* ներկայացում տրուած է՝ *Այաքսներու* դերերը կատարելու համար պէշիկթաշցի դերասաններ փնտռուած են:

Այրերը հոս շաբաթն երկու անգամ շապիկ կփոխեն: Երբ ազգասիրութեան վրայ խօսք բացուի՝ կ'ըսեն նախ բաղնիք եւ ապա ազգ: Աստնք, քիչ բացառութեամբ, ժամերով սափրիչներու առջեւ կ'նստին, եւ ածիլուելէն առաջ երեք ժամի չափ մազիւխով կփետտեն իրենց բիւներուն ծայրերն եւ կլոր ձեւ մը կու տան անոնց:

Դառնանք իգական սեռին:

Գեղեցիկ սեռն փողոցը քալած ժամանակը գետինը չնայիր, այլ երկինք, եւ աս ալ թերեւս իւր պարանոցն ցոյց տալու համար: Կիները հոս մեծ ազդեցութիւն ունին իրենց էրիկներուն վրայ, որոնք միշտ կիներուն ետեւէն կքալեն ըստ աւետարանին՝ *թէ թողցէ այր զհայր եւ մայր իւր եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ*: Կիներն այրերու հնազանդելու տեղ՝ այրերը կիներու կհնազանդին: Պէշիկթաշի կիները գեղեցիկ են, տան տիկին եւ տնաշէն. հոս բրնձի փոշին շատ յարգ չունի: Պարզասիրութիւնն ալ քիչ յարգ ունի. վասն զի Պէշիկթաշի թաղն Բերայի շատ մօտ ըլլալով՝ թաղիս իգական սեռը շաբաթը գոնէ մէկ անգամ Բերա կ'երթայ եւ նոր ձեւը կ'առնէ տունը կրերէ:

Այս թաղին կիներն այրերէն աւելի ազգասէր են, բայց օրուան մեծ մասն իրենց հագուստ ձեւելու եւ կարելու յատկացուցած ըլլալով՝ ժամանակ չեն գտներ աղջիկներու վարժարանն անգամ մը աչքէ անցունելու:

Պզտիկ աղջիկներուն գալով՝ ասոնք փողոցէն անցնողներէ չտեսնելու եղանակով մը պատուհաններուն առջեւը կ'նստին, եւ քովի տունը զարնուելուն պէս՝ իրենց գլուխը պատուհանէն դուրս կհանեն եւ դուռը զարնողը գլխէն մինչեւ ոտները քննելէն ետեւ վազելով վար կ'երթան, եւ իւրաքանչիւրն իրեն մօրը կ'իմացունէ, թէ այս կազմով, այս հասակով, այս գոյնով մէկը եկաւ դրացւոյն տունը: Մայրերն շնորհակալութիւն յայտնելով այս փոքր դեսպաններուն՝ նորէն վեր կը